ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի ապրիլի 17 -ի թիվ 127- Ա

ՌԱԶՄԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԵՎՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմանբ հաստատված N 1 հավելվածի 20-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արևուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Ռազմիկ Թորոսյանի 2026 թվականի ապրիլի 16-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ռազմիկ Թորոսյանին 2026 թվականի ապրիլի 17-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արևուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև հիմքի վերացումը նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արևուտի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռազմիկ Թորոսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

ՀՀ Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 4/20/2026 12:42:57 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890452

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. ապրիլի 17

ք.Աշտարակ